

Արևադաշտ համայնքի ղեկավարի հաշվետվությունը համայնքի բնակչության առջև 2012թ-ի 2-րդ կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր, այսօր մենք հավաքվել ենք մարզպետ պարոն Ա. Ղահրամանյանի կարգադրությամբ լսելու համայնքի ղեկավարի, ավագանու, համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Համայնքի խնդիրները լուծելու նպատակով, համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար, ավագանի:

Լսելով քննարկելով բնակիչներին հուզող բոլոր խնդիրները, միջոցներ ենք կիրառում դրանք լուծելի օգուտ մեր բնակչությանը:

Զինկոմիսարիատի հետ կատարվել են կցագրման աշխատանքներ:

Զինակոչիկների ընտանիքների հետ կատարվել են հատուկ բացատրական աշխատանքներ:

Նոր թաղամասի մուտքի գլխավոր գազատար խողովակների աշխատանքները ավարտված են, սակայն ընդունման և հանձնման գործընթացը չի կատարվել նրանց աշխատանքային թերությունների պատճառով:

«Հայկ Մշեցի» ՍՊԸ-ի կազմակերպության հետ կնքել ենք պայմանագիր գազաֆիկացումը ավարտին հասցնելու և գազի անսարքությունը վերացնելու համար, որի համար իրենց հաշվեհամարին փոխանցվել է 17,661,0 մլն դրամ, սակայն մինչև այսօր ձգձգվում է աշխատանքները և շահագործման չի հանձնվել:

Աշխատանքների ավարտի պայմանագրով ժամկետ է սահմանված եղել մինչև 30.07.2010 թվական:

Խմելաջրի նոր գիծ է անցկացվել դեպի Արևադաշտ Ասիական բանկի ֆինանսավորման շնորհիվ:

ՄԱԿԻ զարգացման ներդրումային ծրագրի շնորհիվ 2012թվականի 2-րդ կիսամյակից սկսվել են խմելաջրի ներքին ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքները, որի ավարտից հետո ազգաբնակչությունը կունենա ամենօրյա խմելու ջուր՝ հաշվիչների առկայությամբ:

Ազգաբնակչության մի մասը արդեն մի քանի տարի է ինչ ոռոգման ջուր ունի, իսկ մյուս մասն էլ չունի, այսօր մյուս մասի ոռոգման ջրագիծը պատրաստ է, սակայն Արմավիր ՋՕԸ դեռ պայմանագիր չի կնքել ինչ-ինչ պատճառներով: Շուտով բոլորն էլ ապահովված կլինեն ոռոգման ջրով: Մարզպետի միջամտությամբ Արևադաշտ համայնքում տեղադրվել է մեկ հակակարկտային կայան:

2008 մետր երկարությամբ կիսախողովակներ է անցկացվել համայնքի Արմավիր ՋՕԸ-ի ոռոգման տարածքում:

Համայնքի որոշ աշխատանքներ դանդաղ են իրականանում, դա այն պարզ պատճառով է, որ մեր համայնքի բնակիչները, ովքեր ունեն սեփականաշնորհված և միաժամանակ վարձակալական ոիմունքներով վերցված հողատարածքներ, չեն ցանկանում ժամանակին կատարել վճարումներ: Այս ուղղությամբ կատարել ենք քայլեր, որ այսուհետև կկատարվեն քավարար քանակությամբ գանձումներ: Կատարվել են կազմակերպչական աշխատանքներ, որի շնորհիվ գյուղապետարանի աշխատողները չունեն հողի հարկի պարտքեր: Երկրորդ կիսամյակի կտրվածքով հողի հարկի գումարը կազմում է՝ 100.2%, իսկ գույքահարկի գումարը կազմում է՝ 137.0%, տեղական տուրքերի գումարը կազմում է՝ 177.8% վարձակալական հողերի գումարը կազմում է՝ 61.9%:

ՄՌՕ-ի հետ համատեղ աշխատանքի շնորհիվ գանձումների տոկոսը բարձրացել է: Համայնքը ունի մի շարք խնդիրներ, որոնց նկատմամբ լուրջ ուշադրություն ենք դարձնում և հնարավորինս չափ պետք է արագացնել և միահամուռ ուժերով իրականացնել, թե ճանապարհաշինության մեջ, թե դպրոցի շենք ունենալու և մի շարք ուրիշ հիմնահարցեր իրականացնելու գործում:

Աշխատակազմի քարտուղարի կողմից բնակչությանը տրվել են տեղեկանքներ, քաղվածքներ, կատարվել են դիմումների քննարկումներ:

## Արևադաշտ համայնքի եկամուտների կատարողականը

առ 10.01.2012թ. մինչև 28.12.2012թ.

- հողի հարկ 8016.3 դրամ
- գույքահարկ 383.5 դրամ
- վարձակալական հողերի վարձավճար 1225.3դրամ
- դոտացիա 1177.3 դրամ
- տեղական տուրքեր 88.9դրամ
- 

### Ծախսերի կատարողական

- գյուղապետարանի աշխատավարձ 6308.9 դրամ
- պարտուղի սոց վճար 1382.3դրամ
- ԴԱՀԿ-ի որոշմամբ 566.3
- Սոց Օգնություն 740.0 դրամ
- Գործուղում և ծառայութ. վճար 250.0
- մասնագիտական ծառայություն. 220.0
- Էլ.էներգիայի գումար 50.0
- Տեղեկատվական ծառայություն 220.0
- Գրասենյակային ապրանքներ 100.0
- Տրանսպորտային ծառ. Վճար 400.0
- Կապի ծառայություն 30.0
- Վարչական սարքավորումներ 300.0
- Տրանսպորտային ծախսեր 300.0

### Քարտուղարություն

10. Հունվարի 2012թ.-ից մինչև 28. դեկտեմբեր 2012թ

Կայացել է ավագանու նիստ	Քաղաքացիներից ստացված և քննարկված դիմումների թիվը	Մուտք արված գրությունների թիվը	Ելք արված գրությունների թիվը	Տրված տեղեկանքների թիվը
10	46	84	66	289

Արևադաշտ համայնքի ղեկավար *Հ.Օհանյան*

